



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 սեպտեմբերի 2014թ. թիվ 335-Ա

**ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶԻ ԿԱՐԿՏԱՀԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՏՈՒԺԱԾ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ՄԱՍՆԱԿԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ
ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ
ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. օգոստոսի 7-ի N 834-Ն որոշման 1-ին կետով հաստատված թիվ 4 հավելվածը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.12 կետով, հաշվի առնելով «Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառած վնասի գնահատման» մարզային հանձնաժողովի 14.07.2014թ. թիվ 2 արձանագրությունը, ինչպես նաև Ամրակից, Գարգառ, Գյուլագարակ, Հոբարձի, Վարդաբլուր համայնքներում կազմված համապատասխան ակտերը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ամրակից, Գարգառ, Գյուլագարակ, Հոբարձի, Վարդաբլուր համայնքների կարկտահարությունից տուժած գյուղացիական տնտեսություններին հողի հարկի մասնակի փոխհատուցման նպատակով 2014 թվականի 3-րդ եռամսյակում բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով հատկացնել գումար՝ համաձայն հավելվածի:

2. Նշված համայնքների ղեկավարների հետ կնքել անհատույց նպաստների հատկացման պայմանագրեր:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ս.Հովհաննիսյանի վրա:

ՀՀ ԼՈՒՈՒՄԱՐԶՊԵՏ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. սեպտեմբերի 23
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2014թ. սեպտեմբերի 23-ի
թիվ 335-Ա որոշման

ՀՀ կառավարության 07.08.2014թ. թիվ 834-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզի
կարկտահարությունից տուժած գյուղացիական տնտեսություններին հողի
հարկի մասնակի փոխհատուցման նպատակով 2014 թվականի 3-րդ
եռամսյակում մարզի համայնքներին հատկացվող գումարներ

Հ/Հ	Համայնքի անվանումը	ինը ամիս (հազ. դրամ)	տարի (հազ. դրամ)
1	Ամրակից	1806.3	1806.3
2	Գարգառ	1306.9	1306.9
3	Գյուլագարակ	3890.3	3890.3
4	Հոբարձի	1296.8	1296.8
5	Վարդաբլուր	2532.7	2532.7
	Ընդամենը	10833.0	10833.0

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱԿԱՐ



Ա.ՄԱՆՈՒԿՅԱՆ